

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպէսով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատեղիքները:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Ե Ֆ Օ Ն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունուած է ամեն լեզուով:

Յայտարարութիւններ համար վճարում են
խրաւարդիւր բառին 2 կոպէսով:

Տ է Լ Ե Ֆ Օ Ն № 253.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՄԱՐՏԻ 6

Գաղութաւ Գաղութաւ անց, խորին ցաւով յայտնելով իր քրոջ, Հայուհեաց ընկերու-
թեան կար ու ձին զարդի նախկին աշակերտուհի:

Օ Ր Ի Ո Ր Դ Մ Ա Ր Ի Ա Մ Գ Ա Լ Ս Տ Ե Ա Ն Յ Ի

Մահը, որ տեղի ունեցաւ Մերկի գիւղում, 19 տարեկան հասակում, խնդրում է բարեկամներ-
ին և ծանօթներին յարգել իրանց ներկայութեանը հանգուցեալի հոգեհոգիին, որ
տեղի կունենայ մարտի 9-ին, կիրակի օրը, Քաղաքեացի հիւրընկերութեան, պատարագից յետոյ,
առաւօտեան 11 1/2 ժամին:

1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Փոքրիկ նշույլ Աւերակների երկրից.—Ներքին
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Օրէցօր. Մատենագրութիւն. Պատշա-
տական հայտ. Նամակ իրարից. Նամակ Տաղա-
րօղից. Ներքին լուրեր.—ՍԱՏԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Վերջին տեղեկութիւններ. Նամակ Բաղրամբեցի,
—ՀԱՅԱՍՏԱՆԻՆԻ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅԱՍՏԱՆԻՆԻՒՆ.
Ներք.—ԲԱՆԱՍՏԱՆԻՆԻՒՆ. Նամակ Անգլիայից.

ՓՈՔՐԻԿ ՆՇՈՒՆ

«Русскія Вѣдомости» լրագրի բերի-
նի տարանգրութիւնը նկատել է
գերմանական ազգի մէջ տարամարտութեան
փոփոխութիւն: Գիւս մի քանի ժամանակ
առաջ գերմանացիները հրձկնում էին Նոր-
նով, որ առաջին ուսման կրեաւոր քրիս-
տոնականների դէմ արձակել է գերմանական
մարտանաւը: Այդ «փառքը» ոչ ոք չէր էլ
ուզում խել խելիստերների հայրենիքից:
Բայց հիմա, ինչպէս փայտում է թղթակիցը,
գերմանացիները կթէն յառաջդրութիւն չեն
ցոյց տալիս, բայց դուք սկսել են հետա-
քերտել արեւելեան հարցով այնքան, որ
պատահելիս միմեանց հարցնում են, թէ ո՞վ
է համակրում յայտնիս.—Այդպիսով իրանց
համակրութիւնը դէպի հարստահարութեան
ներք ցոյց է տալիս ժողովրդի մեծամաս-
նութիւնը, նա, որ մեծացել է Բիւսարիկի
կաթով:

Իսկ սոցիալ-դեմոկրատների կուսակցու-
թիւնը մի քայլ առաջ գնաց: Յայտնի սո-
ցիալիստ Բերէլ փետրվարի 19-ին մի ժողո-

ւում խօսեց «Արեւելի գործերի մասին»:
Հաւաքովի էր մեծ բազմութիւն: Նշանա-
ւոր ճառագրութիւն յայտնեց այն միտքը, որ
արեւելեան հարցը քաղաքականութեան խո-
չընդոտ է հանդիսանում և պէտք է լու-
ծուած քաղաքականութեան հետ հա-
մագում ունենալ, որ թիւրքը իբրեւ անհատ
աւելի լաւ բարեմասնութիւններով է օժա-
ված, քան յայտնի և հայր Բայց իբրեւ ազգ
թիւրքը հանդէս է բերել իր կատարեալ
անանկութիւնը, ուստի նա պիտի ապա-
րէզ տայ այն ազգութիւններին, որոնք
ձգտում են դէպի առաջադիմութիւն: Այդ
պատճառներով հետագայում նախատես էր
գերմանական քաղաքականութիւնը, որ դի-
մադրում է արեւելեան հարցի արդար լուծ-
ման բերելին պատահականացնելով Նա-
ուսում, ազգային-սոցիալիստական կուսակ-
ցութեան պարագլուխը: Նա պաշտպանեց
կառավարութեան ուղղութիւնը, ասաց որ
Գերմանիան չէ պիտի մոռանայ, թէ Արե-
ւելքում Անգլիան, ինչպէս էլ յայտնի է,
կառավարեալ անգլիական ապրանքները
այնտեղ շուկայից կը հեռացնեն բոլոր միւս
ազգիների ապրանքները.—Բերէլ ստիպեալ
եղաւ յայտնելու իր ակոյտանքին, որ չէ կա-
րելի պաշտպանել թիւրքականութիւնը և մար-
տանաւորի վրա հիմնված քաղաքականու-
թիւնը, այլ պէտք է պահանջել որ նա,
այդ քաղաքականութիւնը, հիմնված լինի
մարդկութեան խելացի շահերի վրա:
Այս անմեղ հակաճառութիւնները, ի
հարկէ, ոչինչ ազդեցութիւն չեն կարող ու-

յաղաքանք մատուցել նոյն իսկ օտար կառավա-
րութիւնները:

Պ. Հանսօմ կէտ մը մոռացել է միայն, սահ-
մանադրութեան վերաբերմութիւնն ալ կը կա-
տարուի:

Օրմանեան պատրիարք կրնայ պարծնել թէ
այս դեղեցիկ յայտարարութիւնները ընկու բա-
ւական ճառագրութեան: Միակ ծառայութիւնը, զոր
հայ եկեղեցական մը կրնար մատուցանել հայ
ազգին իրարեւանի ապաւանդէն յետոյ ուրիշ
բան չէր, բայց եթէ պատրիարքաւորին դուք
հետոյ փախչել: Պատրիարքաւորին փախ պահել
նամանակն իրաւաստութիւնը միջոցի էր մեր դատար-
նութիւնը ոչ նպատակէն, դուք չէ իրաւաստութիւն
երբ եկեղեցական մը բաւական չը համարի
պատրիարքութիւնը ստանձնելով հարուածել հայ-
կական իմաստը ու կեղծ կը ներկայացնէ առա-
ջադրելու, որոնց ընդունելութիւնը իբր թէ գո-
հացուած պիտի տայ հայ ազգին, արդեօք մեր ո՞ր
թշնամիներուն դատարարին մէջ մտնելու է
այդ տեսակի յիմար փառատնայութիւններն տա-
ծողները:

Ի՞նչ է, ընդհանր իրականութիւնը: Նախորդ
նամակում մը կըլէի թէ Օրմանեան պատրիարք
չառ քէշ ծառայութիւն մը կը մատուցանէ «իր»
տեղութեանը: Ներկայացուցած առաջադրելու
չառ օրինէն, բայց անս անոնց մերժումը իսկ
ցոյց տալիս տայ, թէ սուլթանը ոչ կուզէ և ոչ
ալ իրարից ազգ ամենաշինքն բարեկարգութիւննե-
րը իսկ մտնելու: Դաւանանքին է որ Օրմանեան
պատրիարք այս ճշմարտութիւնը հանդիսաւորա-
պէս հաստատելու: Միակ միջոց մը կը մնայ իրեն
թէ քաւելու այն մեղքը, զոր գործեց ընդունելով
պատրիարքական պաշտօնը, թէ այն մեղքը, զոր

նկատ Բիւսարիկի սրբութիւններին երկր-
պագող մի երկրում: Սենեակի մէջ գերմա-
նացին կարող է խօսել, իսկ դրսում խո-
սողը գերմանական սաղաւարտն է: Բայց
այդքան էլ բաւական է, որ Գերմանիան
ցոյց տայ թէ ինքը միապաշտող գործնոց
չէ, այլ մարդկային սրտի նման մի բան
ունի կրծքի տակ, որ, ով դիտէ, կարող է և
լաւ բաներ խօսել, թէ և քրիստոնէական
մարդկութեան կրօնի պաշտօնեան, սոցիալիզմի
զրօշակի տակ կանգնած, ազգերի գոյու-
թեան խնդիրը կապում է անգլիական կամ
գերմանական ճիշտ ու պատանքների խնդրի
հետ:—Այս Գերմանիան է, Գեօթներին, Շի-
լերներին, Հէյններին, Բեօրնէներին հայրե-
նիքը...

ԱՆԵՐԱՎՆԵՐԻ ԵՐԿՐԻՅ

«Մշակի» ընթերցողներին յայտնի է, որ անգ-
լիական պրօֆեսոր Բենդլը Հարբիս անցեալ
1896 թին իր կնոջ հետ միասին կատարեց մի
ճանապարհորդութիւն Փոքր-Ասիայում թէ գիտ-
նական նպատակով և թէ ծանօթանալու համար
այդ երկրի ներկայ վիճակին: Նորիս լոյս տե-
սաւ Անգլիայում այդ ճանապարհորդութեան նը-
կարագրութիւնը, որ կրում է հետեւեալ վերնա-
գիրը «Letters from the Scenes of the Recent
Massacres in Armenia» By I. Rendel Harris
and Helen B. Harris. London. James Nisbet
and Co 1897.

Փոքրեւոր կազմուած մի փոքրիկ նամակով
յայտնում է իր գոհունակութիւնը այդ գրքի մա-
սին: Դա՛ հայկական սարսափների նկարագրու-
թեան կրկնութիւնը չէ: Դա մի ճանապարհոր-
դութիւն է, որ կատարվել է քաղաքական փո-
թորիկից յետոյ նրա թողած չափանքով. դա
կնիքանի պատկեր է այն աւերումների, որոնց
նմանը միայն կարելի է գտնել մարգարէների
նկարագրութիւններին մէջ. դա ներկայ ժամանա-
կում հաւատարմ համար տեղի ունեցած գոհուն-
ութեան մի հազներգութիւն է:

գործեց առաջադրելու ներկայացնելով. այդ մի-
ջոցը ուրիշ բան չէ, բայց եթէ պատճառաբա-
նեալ հրաժարականով մը քաշուի պատրիարքա-
կան ակնունքի Օրմանեանի այս հրաժարականը
եթէ իրեն համար բաւական է կըլլայ, միան-
գամայն ծառայութիւն մը մեր դատին:

Այսպիսի բողոքի մը պէտքը չառ դժուր է
այն պահուն, երբ հայկական խնդրին վրա գրե-
թէ ալ խօսող չի կայ, և միանգամայն լուրեր
կը չըլին սուլթանին նորանոր հնարքներու մա-
սին: Եւեւէ «Սմիթթար» կը հաղորդէ թէ Պո-
լիս լուր մը կայ, որ սուլթանը իբր թէ ալ հաս-
կնալով այն սխալ ճամբան, ուսկից կընթիւնար
մինչև հիմա, որոշած է ետ դառնալ, ուստի և
ընթացք կը խորհի բարեկարգութիւններով օժ-
տել իր պետութիւնը, հետեւեալ իր խորհրդա-
կաններուն հրամայած է պատրաստել ընդհա-
նուր ծրագիր մը ամբողջ պետութեան բարե-
կարգութեանը համար, առանց խաղութեան ցե-
ղի, կրօնքի:

Այս լուրը անհաւատալի է, և հաւատալի իսկ
ըլլայ, կարեւորութիւնէ դուրի. ասանկ խաբեա-
լութիւններն առաջին անգամը չէ, որ կը լուրին
թոյլ չըլլայ մինչև անգամ խաբեալութիւն, կա-
րելի է, որ Թիւրքիան բարեկարգութիւն ինքն իր
ձեռքովը:

Սուլթանը այս օրինակ նոր հնարքի մը պէտքը
զգացած կրնայ ըլլալ Պերիւնէն ստացած զեկու-
ցումով մը: Հոս խոչոր լուր մը հեռագրուեցաւ
Գեյլի Թիւրքիային. Վիլհելմ կայսրը սուլ-
թանին հաղորդել է ի Պոլսոյ գեղասպանութեան
դին պատրաստած և գաղտնի պահուած ծրագի-
րը: Այս անգամայնապաշտութիւնը բաւական յու-
զում պատճառած է զիւսանադիտական չըջանակ-

Պրօֆեսոր Հարբիս և իր կինը նախ գնացին
Կ. Պոլիս, այնտեղից Զմիւռնիա և յետոյ Ալեք-
սանդրէտա, որտեղից մուտք գործեցին երկրի
խորքերը և առաջին քաղաքը, որ այցելեցին,
Կիլիկիայէն: Դա ճանապարհը առաջ անցնում է հա-
նիներին միջով, իսկ յետոյ բարձրանում է դէպի
ծաղկաւետ լեռները: չըջապատված գեղեցիկ տե-
սարաններով: Դա ճանապարհորդներին ուղեկցում
էին զինուորներ: Այնպիսով, ուր 1895-ի նոյեմ-
բերին տեղի էր ունեցել մի մեծ կոտորած, նրանք
տեսան հայոց եկեղեցիներ փոխարկված հիւան-
դանոցի: Այնպիսով գտնվող ամերիկական մեծ
հիւանդանոցի կառավարիչ միտտեր Ֆրէլէր պատմեց,
որ երբ կոտորածի միւս օրը նա գնաց տեղա-
կան նահանգապետի տունը, նա գտաւ նրան իր
չըջապատողներին հետ միասին կեղծ տխրու-
թեան մէջ. «Որչափ ստիպել է, ասում էին նը-
րանք, ինչ կարող էինք մենք անել, Աստուած
այդպէս կամեցաւ»: Դիւնյուսայի անիրաւի անե-
րը զարդարված էին կողոպտվածների գորգերով
և կահկարասիքով: Սակայն կոտորածից յետոյ
Թիւրքերին յանկարծ սարսափ պատեց, նրանք
երկիւղ զգացին, որ Անգլիան վրէժխնդիր կը
լինի սպանվածների համար. բայց երբ տեսան,
որ անգլիացիները ամենին ժողովրդական չու-
նեն տեղից չարժակել, այն ժամանակ էլ ի
նրանցից մի քանիսն այն և պատեցին փողոց-
ները կանչելով «Հանապաքս տուէք Վիկտորիա
թագուհուն»:

Տեղին Հարբիս, որ հետո վերադուր Էր Լուսա-
նիաքական մեղքներ, հանել է շատ նկարներ
այրված և աւերված տեղերից: Այնտեղի աները
բարձր պարիսպներ ունեն իրանց չուրը, օգտ-
վելով այդ հանգամանքից մի ընտանիք կարողա-
ցել էր փորել ներքնայարկ իրանց բնակարանի
տակը և այնտեղ պատասպարվել. մի առանձին
անցը միացնում էր ներքնայարկը ջրհորի հետ:

Գրքի հեղինակը հայերին նկարագրում է իբ-
րե կրօնաւոր և ջերմասէր մի ժողովուրդ,
իսկ քիւրդերին իբրե արիւնաբերու և զաւառա-
բարոյ վայրենիներ, որոնք քանդում են և ոչնչ-

նեղում մէջ, բայց Վիլհելմ կայսրը ըսել է թէ՛
«Իր դեսպանը գաղտնապահ ըլլալու պարտակա-
նութիւն ստանձնած է, բայց ոչ ինչ: Դրագրին
էութեանը վրա նորէն բան մը չի խօսուի, բայց
կը հաղորդուի թէ սուլթանին սիրող հանգստա-
ցի է: Հաւանորէն այս անգամայնապաշտութեան
վրա սուլթանը ինք մէջ ինչայ նոր կատակեր-
գութեանը մը նորէն խաղ խաղալու, մինչև որ
նոր ողբերգութիւն մը պատրաստէ:

Այդ ողբերգութեան ամեն րօպէ սպասելու
ենք: Արեւմտական խնդրին շարունակութիւնը,
կրեացի մահմետականներու կրած տառապանք-
ները իրենց հակահարուածը կունենան Հայաս-
տանի մէջ: Հայաստանի քրիստոնեաներուն ջար-
դը, կըլէ Գեյլի Թիւրքիային, շատ գրեցեց Արե-
ւելի քրիստոնեաները, որոնք քրիստոնեութեան
վրէժը կը լուծեն իրենց իսլամ հայրենակիցնե-
րէն: Ասոնց ջարդին լուրերն ալ երբ հասնի
Փոքր-Ասիա, այնտեղի իսլամներ ալ իրենց վրէժը
օլիտի լուծեն, ասանկ կը վախցուի, քրիստո-
նեայ հայերէն»:

Ֆրանսական կատակերգութեան մը մէջ կայ
տեսարան մը, որ շատ կը յարմարի այս մեր վի-
ճակին: Այդպէս մը ամուսնութեանը պայմանա-
գրելը ծնողքին առջև կարգացուած ժամանակ
ամեն մէկ յօդուածի մէջ կը յիշուի ապագայ
ժամանակութեան ատիւ: Երբ հայրը մեռնելու
ըլլայ... երբ հայրը մեռնելու ըլլայ...—Բայց
այս ուրախութեան մէջ խնդրել միշտ իմ մահ-
ւանս վրա է, կը գտնէ ինքզ հայրը զարնուած:
Օ՛հ, այս բոլոր վրէժխնդրութիւններուն, այս
բոլոր բարեկարգութիւններուն ժխտին մէջ խը-
ղիւր միշտ մեր կոտորածին վրա է:
